## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՂՏՈՏՈՒՄԸ ԾԱՆՐ ՄԵՏԱՂՆԵՐՈՎ

## ENVIRONMENTAL CONTAMINATION WITH HEAVY METALS

Հանրապետական Գիտական Կոֆերանս

# Որոշում

ք. Երևան 28 հունիսի 1996 թ.

### Ընդունված է եզրափակիչ նիստում

Ս. թ. հունիսի 28-ին Երևան քաղաքում անց է կացվել «Շրջակա միջավայրի աղտոտումը ծանր մետաղներով» հիմնահարցին նվիրված գիտական կոնֆերանս:

Կոնֆերանսը կազմակերպել են ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնը և Հայ կանանց էկոլոգիական համագումարը, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ֆինանսական օգնությամբ և Ամերիկայի Հայկական Ասամբլեայի Ոչ Կառավարական կազմակերպությունների կենտրոնի աջակցությամբ:

Կոնֆերանսի աշխատանքին մասնակցել են 32 կազմակերպություններից 90-ից ավելի մասնագետներ և ներկայացուցիչներ:

Նիստերի ծրագրով լսվել և քննարկվել են 15 զեկուցումներ, հրատարակվել են հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով հիմնահարցին նվիրված 27 թեզիսներ:

Կոնֆերանսի մասնակիցները նշեցին շրջակա միջավայրի աղտոտումը ծանր մետաղներով հիմնահարցի հույժ կարևորությունը և արդիականությունը, այս ուղղությամբ տարվող հետազոտությունների մեծ նշանակությունը ազգաբնակչությանը վնասակար ներազդեցությունից պաշտպանման համար:

Կոնֆերանսը ցույց տվեց կատարվող հետազոտությունների հիմնական մասի բարձր գիտամեթոդական մակարդակը, հիմնահարցի լայն ընդգրկումը և ստացված արդյունքների հեռանկարային հնարավորությունները շրջակա միջավայրի պահպանության և բնակչության պաշտպանման խնդիրներում:

Հատկապես այս ուղղությամբ մեծ ներդրում են հանդիսանում Երևան քաղաքի տարածքի նորակազմ մանրակրկիտ էկոլոգաերկրաքիմիական քարտեզները: Այս քարտեզները թույլ են տալիս հստակ գտնել աղտոտման աղբյուրները, վերլուծել քաղաքային լանդշաֆտի առանձնահատկությունները, որոշել բնակչության մեջ ռիսկի խմբերը, հետազոտել կենդանի համակարգի ռեակցիան տեխնածին աղտոտման նկատմամբ:

Առանձնահատուկ ուշադրության արժանացան ծանր մետաղներ պարունակող գյուղմթերքներով բնակչության սնման մասին բերված տվյալները:

Միաժամանակ կոնֆերանսը նշում է հետազոտությունների ցածր կոորդինացումը, հատկապես միջդիսցիպլինար մակարդակով, որտեղ հենց պետք է ակնկալել առավել կարևոր արդյունքները, որի ցայտուն օրինակ է հանդիսանում պերինատալ մահացության դեպքերի և տարածքի ծանր մետաղներով աղտոտվածության համատեղ ուսումնասիրությունները:

Շրջակա միջավայրի աղտոտումը ծանր մետաղներով» հիմնահարցի գիտագործնական աշխատանքների առաջընթացի համար **<u>կոնֆերանսը համարում է նպատակահարմար՝</u>**

1. Ստեղծել էկոլոգաերկրաքիմիական ինֆորմացիայի հավաքման, մշակման և պահպանման միասնական համակարգ:

2. Ստեղծել միջգերատեսչական աշխատանքային խումբ քաղաքակենտրոնացված տարածքներում ձևավորված աղտոտման մակարդակի վտանգը գնահատելու համար:

3. Դիմել ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնին ապահովելու գիտական կոորդինացիա լաբորատոր անալիզների, ինֆորմացիայի և աշխատանքային փորձի փոխանակման ոլորտում:

**Կոնֆերանսը անհրաժեշտ է համարում՝**

- Խնդրել Գիտությունների Ազգային Ակադեմիայի Նախագահությանը ընդգրկել «Շրջակա միջավայրի երկրաքիմիա և կենսաերկրաքիմիական ցիկլեր» հիմնահարցը հիմնարար հետազոտությունների առաջնային ուղղությունների ցանկում:

- Խնդրել Բարձրագույն կրթության և գիտության նախարարությանը նպատակային գումար հատկացնել Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնին 1997-1999թ.թ. Երևան քաղաքի էկոլոգաերկրաքիմիական ատլաս կազմելու և հրատարակելու համար:

- Խնդրել ՀՀ Վարչապետին՝ հանձնարարել «Վարչապետին առընթեր գիտության և առաջատար տեխնոլոգիաների խորհրդին» վերականգնել ազգաբնակչության անվտանգության ապահովման համար հույժ կարևոր ծանր մետաղներով շրջակա միջավայրի աղտոտումը ուսումնասիրող թեմաների ֆինանսավորումը:

Կազմկոմիտե